երեխան նրա մեջ ծնի։ Ծնելուց հետո խախալի տեղը գետնի մեջ ցցում էին մի fon՝ բանեցրած մեխ և ասում՝

«էտ էլ քու փայըտ, գնա՞»։

Այստեղ ենթադրվում էր, որ հատակին վխտացող չար ոգիները չեն կարողանա մաղի միջով ծնկների վրայով վեր մագլցել և հափշտակել մանկանը, այնուհետև էլ այդտեղ նրա առաջը կգա ժանգոտած երկաթի կտորը, որից չար ոգիները վախենում են[61]։ Այդ ձևով ծնված երեխայի շապկի համար կտորները հավաքում էին յոթ այնպիսի տներից, որտեղ չկար կին կորցրած տղամարդ, անշուշտ որպեսզի որբևայրու կնոջ մահը չանցնի և նորածնին։ Նորածնի շապիկը կարում էին հենց այդ կտորներից։ Քառասունքը լրանալուց հետո այդ շապիկը, առանց հանելու, հենց մարմնի վրա, կեսից ճղում էին և դուրս շպրտում հերթիկից ասելով՝

«էտ էլ քու փայըտ, գնա՞»։

Երեխան միշտ վտանգի մեջ էր, որ նրան fաշկէրը կարող են հափշտակել։ Երեխայի որ տնից լինելը fաշկէրը հասկանում էին շորի կտորով։ Տարբեր տեղերի կտորներից կարած շապիկը ձգելու էր նրանց շփոթության մեջ։

Կինը հենց որ հղիանում էր՝ այդ մասին չպիտի ասեր սկեսուրին։ Ասում էր մարդուն կամ տեգրակնոջը, որոնք և հայտնում էին սկեսուրին։ Ինն ամիս նա իրավունք չուներ գնալու հորանց տունը և պիտի զգուշանար չբեր կնոջ հետ նստել վեր կենալուց։ Երբեմն այդ արգելքը շարունակվում էր երեխա ծնելուց հետո էլ, մինչև երեք տարի, բացառությամբ այն օրերի, երբ աղջիկը, իմանալով, որ հայրը տանից դուրս է եկել, նրանից ծածուկ և առանց երեխայի այցելում էր մորը։ Այս պահանջվում էր մանավանդ առաջին երեխայից հետո։ Հայրը չէր մտնում այն սենյակը, որտեղ պառկած էր իր ծննդկան աղջիկը։ Այսպիսով, կարծես հորից ծածուկ պիտի լիներ այն, որ աղջիկը դավաճանել է իրենց օջախին կամ իր կուսության դեմ գնալով «մեղք էր գործած»—կրկին մի նոր մնացորդ այն մտայնության, որ սեռական կապակցությունը մեղք է, հանցանք է, ամոթ է։ Այդ մտայնությունը հնչում էր Շինուհայրի (Շնեհերի) գյուղացու պատասխանի մեջ, հարցրինք, թե՝

«էտ տղան ո՞ւմն է»։

— Ամոթ չլինի ասելու, իմ տղան է։—

Կինն աղատվում էր կամ գետնին շոքեցրած վիճակում կամ մի աթոռին նստած տատմերի ծնկների վրա տեղավորված։ Հրավիրվում էր թեթև ձեռք ունեցող տատմերը։ Բժիշկ Գեղեվանովի հավաքած տեղեկությունների համաձայն՝ տանը ոչ մի տղամարդ չպիտի մնացած լիներ։ Կնոջ տակը փռում էին ծղոտ կամ խոտ։ Ուրիշ աղգերի մեջ էլ այս սովորությունը կար և բացատրվում էր գետնի վրա վխտացող չար ոգիներից ծննդկանին պաշտպանելու ցանկությամբ։ Տատմերը օգնում էր՝ ծննդկանի հետույքը սեղմելով, ստիպելով փչել մի շշի մեջ կամ մի քիչ ման գալ՝ մարմինը թափ տալով, և մեղմ թռչկոտելով, կամ փորին եփած, բայց դեռ չսառած այծի մաղ դնելով։ Եթե տղաբերքը դժվարանում էր, ծննդկանին երեք կում ջուր էին խմեցնում տղամարդու փեշից, մնացածը նրա երեսին շպրտում։ Ջուր խմեցնողը պիտի լիներ կամ fավորը[62], կամ շօբանը, որը շատ է օգնում ոչխարին ծնի ժամանակ, կամ մի

---

[61] Բացի դրանից ցանցը համարվում էր պահպանակ. խախալի ցանցը պիտի պահպաներ նորածին երեխային (ծան. խմբ.)։

[62] Երևի այն պատճառով, որ նա պիտի լիներ երեխայի կնքահայրը, ուստի սպասում էր նրա արագ ծնվելուն։